«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ -ի կողմից կազմակերպված աճուրդի մասին ծանուցում

2026-11-20 15:47:51

Հայտատու	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդված

Կազմակերպիչ «Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն իրականացնելու է «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» Հիմնադրամին-ին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող լոտերի վարձակալության հանձնման բաց աճուրդ՝ դասական եղանակով .
- ք. Երևան, Կենտրոն, Թումանյան փողոց, 42 հասցեում գտնվող անշարժ գույքի 1-ին հարկի վենդինգային ապարատների 1,8 ք.մ. մակերեսով տարածք: Լոտի ամսական վարձավճարի մեկնարկային գինը՝ 70000 ՀՀ դրամ:
- ք. Երևան, Կենտրոն, Թումանյան փողոց, 42 հասցեում գտնվող անշարժ գույքի 2-րդ հարկի 5,8 ք.մ. մակերեսով հատավաճառ մթերքի կետ: Լոտի ամսական վարձավճարի մեկնարկային գինը՝ 125000 ՀՀ դրամ:
Վարձակալության պայմանագրի ժամկետը՝նվազագույնը մեկ տարի, առավելագույնը՝ մինչև 2031թ.:
Վարձակալված տարածքում իրականացվելիք համապատասխան ձեռնարկատիրական գործունեության գնային սանդղակը պետք է համապատասխանի ՀՀ ողջ տարածքում համադրելի պայմաններում հատավաճառման և ինքնաշխատ սարքերի միջոցով ապրանքների վաճառքի միջին շուկայական գներին՝ բացառելով միայն Երևան քաղաքի փոքր կենտրոնի գների մոտարկումը: Վարձակալության պայմանագրի հետ կապված ծախսերը՝ վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման, ինչպես նաև հնարավոր այլ ծախսերը պետք է կրի աճուրդում հաղթող արձանագրված անձը:
Վարձակալության մնացյալ պայմանները կարգավորվում են ընկերության կողմից իրականացված հրապարակային ծանուցմամբ, ՀՀ օրենսդրությամբ և պատվիրատուի և հաղթող արձանագրված անձի միջև կնքվելիք վարձակալության պայմանագրով:
Պայմանագիրը կնքվելու է աճուրդի արձանագրությունը կնքելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում կամ պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված ժամկետում:

Աճուրդի փուլերը՝ ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 08.12.2026թ.-ին, ժ.12:00-ին, այնուհետև յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2027թ. ներառյալ: Լոտի աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 20000 ՀՀ դրամ, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է կազմակերպչի դրամարկղ՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար ներկայացվում է՝ ֆիզիկական անձի կողմից անձը հաստատող փաստաթուղթ և կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական, իսկ իրավաբանական անձի կողմից՝ կանոնադրություն, պետական գրանցման վկայական, ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ և մասնակցի վկայական:
Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:
Սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչև աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչև 18:00-ն կարելի է ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը համաձայնեցնելով կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու և անվճար ստանալու համար դիմել կազմակերպչին:

37411526185

flores.auction@gmail.com

ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա, 40 82/31